ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 85

«04» սեպտեմբերի 2012թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Գետաշեն համայնքի ղեկավարի 2012 թվականի օգոստոս ամսին ընդունած որոշումները և կարգադրությունները:

Առդիր 5 թերթ:

Գետաշեն համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 7837-12
05 09 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«28» օգոստոսի 2012թ. N 08

ԳԱԳԻԿ ԱՐԿԱԴԻԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 158-րդ հոդվածի 1-ին և 159-րդ հոդվածի 1-ին կետով , «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Գագիկ Արկադիայի Հովհաննիսյանին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ղեկավար, տալ ամենամյա վճարովի արձակուրդ 24 /քսանչորս/ աշխատանքային օր /քսան նվազագույն, չորս լրացուցիչ/ տևողությամբ 2012 թվականի սեպտեմբերի 1-ց:

2. Գագիկ Հովհաննիսյանի բացակայության ժամանակ լիազորությունների կատարումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ կարեն Հովհաննիսյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գետաշեն համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան

2012թ. օգոստոսի 28

գ. Գետաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«08» օգոստոսի 2012թ. N 06-Ա

# Ինքնակամ զբաղեցրած հողամասը և ինքնակամ կառուցված օժանդակ կառույցը օրինականացնելու մասին

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և «Իրավունք հաստատող» փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 2001 թ. մայիսի 15-ը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ուօրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով Աշոտ Միհրանի Սաատրյանի Դիմումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել ՀՀ Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 5 բնակելի տան հատվածում գտնվող

Աշոտ Միհրանի Սաատրյանի. ծնված 1954թ.

Օվաննա Օգսենի Սեդրակյանի. ծնված 1958թ.

Միհրան Աշոտի Սեդրակյանի. ծնված 1984թ.

Վահան Աշոտի Սեդրակյանի. ծնված 1993թ.

ընդհանուր համատեղ իրավունքով պատկանող 0.22 հա տնամերձ հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի տան և կիսակառույցի՝ օժանդակ շինություններով, սեփականության նկատմամբ իրավունքը:

2. Շենք- շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4. Առաջարկել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Աշոտ Միհրանի Աստրյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ն կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գետաշեն համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան

2012թ. օգոստոսի 8

գ. Գետաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

---

«08» օգոստոսի 2012թ. N 07-Ա

## Ինքնակամ զբաղեցրած հողամասը և ինքնակամ կառուցված օժանդակ կառույցը օրինականացնելու մասին

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և «Իրավունք հաստատող» փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը իրականացվրել է մինչև 2001 թ. մայիսի 15-ը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով Վարդան Օնիկի Մկրտչյանի Դիմումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել ՀՀ Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի 17-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տան

Վարդան Օնիկի Մկրտչյանի. ծնված 1967թ.

Սոնա Միքայելի Վարդանյանի. ծնված 1975թ.

Կարապետ Վարդանի Մկրտչյանի. ծնված 1996 թ.

Կարինե Վարդանի Մկրտչյանի. ծնված 1998 թ.

ընդհանուր համատեղ իրավունքով պատկանող 0.15 հա հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի տան նկատմամբ իրավունքը:

2, Տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 635 քմ հողամասը հատկացնել անհատույց:

3. Շենք- շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Վարդան Օնիկի Մկրտչյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ն կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գետաշենի համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան

2012թ. օգոստոսի 8

գ. Գետաշեն